

# ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ժ.

*Փարեցի՛ խաչին, գտանզը մօսենում է*

Եւ յանկարծ բօթաբեր գոյժը ցնցեց Հայաստանի մի ծայրից մինչեւ  
միւսը . . .

Յոյները պահանջում են Հայաստանը : Նրանք տէր են մի թղթի ,  
որով թուլամորթ թագաւորը՝ Յովհաննէս Սմբատը՝ իւր կնքով եւ ստու-  
րագրութեամբ վաւերացնելով . իւր մանից յետոյ Հայաստանը կտակում  
է Յոյներին . . . Հեշտ է ասել կտակում է . . . բայց չէ՞ որ դա մի  
առն . այդի , ամայի երկիր չէր . որ այդպէս հեշտ անցնէր մէկի ձեռքից  
միւսը : Զէ՞ որ Հայաստանը մեռած չէր եւ չպիտի մեռնէր Յովհաննէս  
թագաւորից յետոյ . . . Նա ապրում էր ազատ , ինքնազլուխ եւ պիտի  
ալրէր :

Հայաստանը սարկական կեանքի սովոր չէր եւ իւր ազատութիւնը  
այզպէս հեշտ . մի թղթի գօրութեամբ չէր առ Յոյներին : Եւ չառեց էլ ,  
Յոյն պատգամաւորը պահանջում էր .

— Զեր թագաւորի տուած թղթի գօրութեամբ մերն է Անին եւ իւր  
չրջակայրը . տուէք մեզ եւ այն ժամանակ դուք մեծապէս կը վարձա-  
րուիք եւ կարժանանաք մեծազօր կայսեր ողորմութեանը :

— Զէ՞ , մենք մեր ձեռքով մեր առնը չենք քանդի , չենք ուզում  
ո՞չ ձեր ոսկիները , ոչ ձեր այստեղ զալը , հեռացէք մեզնից եւ մենք  
խաղաղ կապրինք ձեզ հետ . ասացին մի քանի իշխաններ . իսկ մի քանի  
իշխաններ զլիները կախեցին եւ մատեցցին .

— Ի՞նչ շահ եթէ Գագիկը թագաւոր լինի . մենք աւելի քաւ կա-  
նենք մեծազօր կայսեր ծառայութիւնը ընդունինք . նա մեզ առաջ կը  
վարձարի :

Յոյն պատգամաւորը ե՛ւ ճարտար էր ե՛ւ խորամանի : Նա ցոյց առեց  
նրանց փայլուն ոսկիներ եւ հայ իշխաններից շատերը հրապուրուած զրա-  
նից զբգուեցան իրենց հաւաաններից : Վրայ հասաւ եւ Վեստ Սարգիսը ,  
որ ծածուկ զրդում էր առ Անին Յոյներին : Սակայն մեռած չէր Վահ-  
րամ իշխանը : Նա բնիկաւ սրաով իշխաններին ժողովի հրաւիրեց եւ յոյն  
պատգամաւորի անիբագործելի պահանջը բացարեց :

— Բարեկամնե՞ր , ասաց նա . լաւ կշռեցէք ինչ որ անելու էք ,

որպէս զի ապագայում ամօթով չմնանք եւ մեր յեանորդները մեզ անէծ քով չյիշեն : Դիսէ՞ք արդեօք ինչ է պահանջում մեզանից Յոյնը : Նա պահանջում է մեր ազդի կործանումը, մեր թագաւորութեան քայլայումը : Նա ուզում է, որ մենք մեր ազատութիւնը ծախենք անարդ գերութեան եւ սարկութեան, որ մենք մեր սուրը վայր գնենք եւ վիզներս գէմ տանք մեր թշնամիներին : որ նա կտրի մեր վիզը եւ բնաջինջ անի մեղ . . . ասացէ՞ք, համաձա՞յն էք :

— Ո՞չ, ո՞չ . . . լսուեցան խուլ ձայներ աջ ու ձախից :

— Եթէ ոչ, ուրիշն թող յոյն իշխանը խաղաղութեամբ գնա մեզանից եւ յայտնի մեծազօր կայսեր, որ նրա պահանջ անիբագրութելի է, որ նա զուր մեր արիւնն է պղտորում, որ նա ցնորք պիտի համարի մեզանից Անին առնելու . իսկ եթէ նա կը համարձակուի կրկին ոտք դնել Հայաստան այդ պահանջներով, այն ժամանակ երդուեցէք այս խաչի վերայ, որ մինչեւ վերջին արեան կաթիլը պիտի պահպաննենք մեր հայրենիքը եւ մեր ազատութիւնը : Թող կայսը իմանա՛, որ մենք կապաւինինք մեր պահպան զօրաւոր խաչին եւ զէնքը ձեռքներիս կը կոռունք մինչեւ մեր վերջին շունչը եւ նա մեր գիտիների կոյաների վրայ անցնելով միայն կառնի Անին եւ իւր շրջակայքը . . . Ասոցէ՞ք, իշխաններ, համաձա՞յն էք, ասաց Վահրամ իշխանը եւ նրա ձայնը դողդողաց, այն ինչ աշխերից կայծակներ էին դուրս թոշում եւ սարսկցնում ժողովուած հչխանների մարմինները :

— Համաձայն ենք, Վահրամ իշխան, մենք մինչեւ վերջին շունչ կը կոռունք մեր հայրենիքի ազատութեան համար, ասացին մի քանի իշխաններ :

— Իսկ դու ի՞նչ կասես, մեծազօր խնամակալ, իշխան Վեստ Սարգիս, դարձաւ Վահրամը եւ մի այնպիսի հայեացք ձգեց նրա վրայ, որ նա իսկապէս պիտի սարսար, սակայն Վեստ Սարգսի զէմքի մի մկանունքն էլ չշարժուեց : Նա փորձուած եւ խորամանկ էր : Նա զիտէր այգպիսի գէպիերում իրեն պահել :

— Ո՞հ, Վահրամ իշխան, քո բերանով Ասուուած ինքն է խօսում եւ ես էլ անէծք եմ թողնում այն իշխանի գլխին, որը իւր ձեռքով իւր տունը կը քանդի եւ Անին իւր 4001 եկեղեցիներով Յոյներին կը յանձնի : Վա՛տ եւ անարդ է այն Հայը, ով կը գտաւանի իւր հայրենիքին :

— Իսկ զո՞ւ, Վեհափառ Տէր, ի՞նչ կասես մեր վճռին, դարձաւ Վահրամ իշխանը Պետրոս կետաղարձ կամուզիկոսին, որ ներկայ լինելով ժողովին, լուս լսում էր իշխանների խորհուրդը :

— Իշխաններ, այդ թուղթը, որի զօրութեամբ Յոյները պահանջում են Անին եւ իւր շրջակայքը իմ ներկայութեամբ է դրուած եւ ես մեղաւորս ոչ մի կերպ չկարողացայ մեր հանգուցեալ թագաւորին համոզել, որ դա ազգակործան մի թուղթ է : Նա զրեց այդ թուղթը եւ իւր digitised by A.R.A.R.®

կարճամեայ հանգստութիւնը չառ թանկ գնեց : Բայց այժմ լաւ պիտի մտածէք , որ Յոյները այլ եւս ձեռք չեն վերցնի այդ պահանջից . ուստի եթէ գուք ձեր մէջ զգում էք մի ոյժ , եթէ ձեր մէջ կը լինի անքակտելի միաբանութիւն Յօյներին զիմադրելու , այդ դէպքում ես համաձայն եմ ձեր վճռին և օրհնում եմ ձեր միաբանութիւնը իսկ եթէ ձեր մէջ ընկանելու է երկպառակութեան չար որոմը և ունատակ է լինելու Հայուանը . այդ դէպքում միում է ինձ լսել եւ ձեր յանցանքը ձեր վզով փաթել :

— Դաւաճանը իւր արժանաւոր պատիժը կը ստանայ , Վեհափառ Տէր : Եւ գանի Վահրամ իշխանը կինդանի է . Յօյները Անւոյ տէրը չեն դառնալ : Մեր գանը թէեւ թափուր է , բայց նա տէր ունի : Գագիկը նրա օրինաւոր ժառանգն է եւ պիտի ժառանգի այդ գանը , ասաց Վահրամը եւ հրամայեց յոյն պատգամաւորին ժողովի հրամերի :

Անցաւ մի փոքր ժամանակ եւ յոյն իշխանը խորհրդարան մտաւ . եւ մի աեռակ դոոոզ արհամորական հայեացք ձգելով չորս կողմը , հարցրեց .

— Ի՞նչո՞ւ համար են կանչում ինձ հայ իշխանները :

Վահրամ իշխանի դէմքի գոյնը թառւ . բարկութեան չանթեր անցան նրա դէմքի վրայով ու բարկութիւնից ատամները կրծացրեց :

— Դուք մեղանիզ պահանջում էք Անին , այնպէս չէ :

— Պահանջում ենք , որովհեած մերն է , միթէ կը յանդդնիք դէմ կենալ մհծալոր կայսեր հրամանին :

— Յոյները Անիին չեն տիրանուլ . յայսնեցէք կայսերը . որ այդ ցնորքը հանի իւր մաքից . պատասխանեց Վահրամը :

— Ի՞նչպէս . . . դուք անարդ իշխաններդ յանդդնում էք մեր կայսեր դէմ գնալ : ասաց յոյն իշխանը արհամորհական ժայիս արձակելով դէպի Վահրամ իշխանը :

— Իշխան յեղուիդ չափ գիր , ճանաչիր թէ գու որտեղ ես գարնաւում , պատասխանեց Վահրամ իշխանը մինչեւ ականջները կարմրելով :

— Ի՞նչ , ես պիտի վախսենամ անարդ Հայերից . . .

— Լոի՛ր , ապա թէ ոչ շանսատակ կանեմ քեզ . գոռաց Վահրամը եւ սուրք պատեանից հանելով ուղղում էր յարձակուել յոյն իշխանի վրայ . որը համարձակում էր անարդ լեզու բանեցնել դէպի Հայերը . սակայն այդ միջոցին մէջ ընկաւ Վեստ Սարգիսը եւ նրանց բաժանեց : Յօյն իշխանը , որ երկիր լից թաղնուել էր Վեստ Սարգիս ետեւը , այժմ սիրտ առած իւր սուրբն էր մերկացրել եւ գոռում էր :

Բայց Վեստ Սարգիսը նրան զուրս տարաւ և . քիչ ժամանակից յետոյ ժողովն էլ փակուեցաւ :

Հայուասանի դրութիւնը տագնապալից էր . . . վասնդը մօսենում էր :

ԺԱ.

Լեռների աւագակը

8

Հայաստանի Զորբորդ Հայք նահանգում, Տօրոս լեռներից գէպի հիւսիս, Պաղին կամ Բաղնատառն գաւառում, անմատչելի լեռների ղլիսին բարձրանում էին մի քանի անմատչելի բերդեր ուր իշխում էին Հարէլ իշխանը և իւր որդիքը՝ Հարպիկ, Դաւիթ, Լեռոն և Կոստանդին, Եղբակաց թշնամիներից ոչ մէկը չէր համարձակում խանգարել այդ քաջերի անդորրութիւնը, Թաթարն ու Յոյնը խոյս էին տալիս դրանց երեսից, լսելով նրանց արիւնածարաւ զործերը և դիւեր համարելով նրանց, անուններից անդամ դոզում: Վա՞յ էր նրան, ով կընկնէր այդ չորս եղբայրների սրերի բերանը, Նրան էլ ազատում չկար և սրի մի հարուածը վերջ էր դնում նրա կեանքին:

Մթին անտառներում եւ լեռների խոր ձորերում ու ծերպերում տուատու թեամբ թագնւում էին վայրի կենդանիները, որոնք չէին համարձակում Հարէլի որդիների ահից զլուխները զուրս բերել: Նրանք գիտէին, որ մահարեր նետը վերջ պիտի դնէր իրենց կեանքին: Թոշունները միայն ազատ երգում էին անտառների մէջ և լու իրենց ճաւաղիւնով թնդացնում օդը: Նրանք ազատութիւն էին վայելում այդաեղ, Նրանք գիտէին, որ Հարէլի որդիքը իրենց ձեռք չեն տալ և թէ ուրիշներն էլ չէին համարձակի խանգարելու իրենց հանգստութիւնը: Եւ յիբաւի, Հարէլի որդիքը որքան արիւնածարաւ էին, այնքան բարի և խզնով: Նրանք անխնայ կոստրում էին վայրենի գազաններին: բայց ձեռք չէին տալիս անմնղ թոշուններին: Այդպէս էլ վարւում էին մարդկանց հետ: Հայ շինականներին հոգու շափ սիրում եւ պայտապանում էին, իսկ Յոյներին եւ Թաթարներին տաելով տառում: Նրանք ծարաւի էին զրանց արեանը բայց աւելի ծարաւի այն հայ իշխանների արիւնով, որո՞ք զաւածանում էին իրենց ազդին: Եւ այդ էր պատճառը, որ նրանց որքան սիրում էր գեղջուկը, այնքան տառում էին Յոյներն, Թաթարները եւ հայ գաւաճան իշխանները, որոնք զրանց անունը « աւագակներ » էին հոչակել:

Եւ ահա այդաեղ, լեռների ծերպին բարձրանում է Արդնոյ ամրոցի հոկայ պարիսպները, որի ղլիսին պատռում է բարձրաթափակիչ արծիւը և իւր սրանես աչքերով որս վնասում:

Հարէլ իշխանը կանգնած է աշտարակներից մէկի վրայ և գոհ ոքրտով հնուռն զիստում, այն ինչ իւր երեք որդիքը՝ Հարպիկ, Դաւիթը և Կոստանդինը խորին ակնածութեամբ կանդնած են իրենց հօրից մի փոքր հեռու և լուս իրենց հօր հրամանին են սպասում: Բաւական է մի փոքրիկ նշան, մի ակնարկ, որ երեք որդիքն էլ որդիական ակնածութեամբ

իրենց ցած գլորին աշտարակի բարձրութիւնից : Հարէլը նայում է բաւականութեամբ թէսի իւր ոտքերի տակ տարածուած լեռների ծերպերը, ուր խոխոչալով վազում են լեռնային առուակները և իրեւ մի սպիտակ ժապաւէն ոլորտում լեռների չորս կողմը : Հարէլը դոհունակութեամբ շփում է իւր ալեղարդ մորուսը և ապա ակամայից հայիսացքը վեր բարձրացնում, ուր գեռ պատում էր արծիւը : Յանկարծ նրա դէմքը մի ցընցիւն է սատանում եւ նրա խրօսա դէմքի վրայ անցնում ժպիտի նման մի բան . ապա դառնալով դէսի որդիքը ասում է :

— Որդիք, մօս եկէք :

Երեք որդին էլ մի ակնթարթում մօտ են վազում եւ ձեռքերը կրծքին խորին ակնածութեամբ գլուխ տալիս հօրը :

— Նայեցէ՞ք վեր, աեսնո՞մ էք այն արծուին, «որ մեր զիխին է պատում» . նա որս է փնտում : Հարէլի որդուց ներկայութեամբ նա ուզում է յափշտակութիւն անել, բայց չէ՞ որ նրան այդ իրաւունք չէ տրուած :

— Այո, հայրիկ, նա չի համարձակուի, պատասխանում է Հարպիկը՝ միծ որդին եւ կրկին գլուխ տալիս :

— Հը՞մ, բայց նա մեղ չի ճանաչում, մեր իրաւունքները ուզում է ստնատակ տալ եւ թոցնել մեզանից մի որս :

— Նա կը պատժուի, հայր, եթէ իրաւունք կը տառ, խօսեց կրկին Հարպիկը :

— Այո, պէտք է պատժել, պէտք է սովորեցնել թէ ո՞վ է ապրում այս աշտարակում, ասաց Հարէլը եւ հեղնական կերպով դիմելով բոլորին աւելացըք :

— Բայց ո՞վ արդեօք ձեղանից մի նետի հարուածով ցած կը գլորի նրան իւր բարձրութիւնից :

— Ե՞ս, հայրիկ, ասաց Հարպիկը աչքով չափելով արծուի հեռաւորութիւնը :

— Եւ ես, պատասխանեց միջակը :

— Եւ ես, յետ չմնաց փոքրը եւ նրա սիրութ թունդ առաւ թէ արդեօք կը բաղդաւորեցնի՞ հայրը, այդ գործը իրեն յանձնելով :

— Ինչպէս աեսնում եմ բոլորդ էլ պատրաստ էք, եւ եթէ կեւոնիկս էլ այստեղ լինէր, նա էլ յետ չէր մնայ . բայց նա յաւ զործի է : Դէ՞ն, Կոստանդին, սկսիր, այդ պատիւը քեզ եմ տալիս, ինչպէս ամենափոքրին, Ես տեսնում եմ որ աչքերդ անհամբերութիւնից փայլում են, ասաց Հարէլը :

Կոստանդինը էլ սպասեցնել չառւեց : Նա վերցրեց նեաը, զբեց ազեղի մէջ եւ մի վայրկեան դիտեց արծուի պատյտի ձեւը : Հայր եւ որդիք հետաքրքրութեամբ նայում էին թէ արդեօք չի՞ վրիպի նա նշանից : Արծիւը բաւական բարձր էր :

Յանկարծ Կոստանդինը հաստատուն ձեռքերով քաշեց լարը : Նշան դրեց եւ բաց թողեց նետը : Նետը սլացաւ վե՛ր եւ մի քանի վայրկենից յետոյ հայր եւ որդիք տեսան , որ թոչունների թագաւորը տատանուեց , երերաց եւ ուժնութեամբ ցած սլացաւ . մի քանի վայրկեան էլ եւ նա ընկաւ Հարէլի ոտքերի տակ . . .

Հարէլը տեսաւ , որ արծուի կրծքին մխուած է Կոստանդնի արձաւ կած նետը եւ նրա կրծքից բղխում է արիւնը :

— Ապրիս , զաւակս , զու արժանի ես իմ որդի կոչուելու , ասաց հայրը :

Կոստանդինը մօտեցաւ հօրը , ծաւնկ չոքեց եւ համբուրեց հօր ձեռքքը , իսկ հայրը նրա ճակատը :

Տիրեց մի փոքր լուսթիւն : Հարէլը կարծիո առժամանակ մոռացաւ արծուին եւ նրա դէմքին վրայ մի միմին ամոզ անցաւ : Երեւում էր , որ մի ինչ որ բան անհանդսացնում էր նրան , որ մի ինչ որ յուզում էր նրա սիրաց :

— Հարպիկ , բոււական ժամանակ է մենք տեղեկութիւն չունենք Շիրակից . այդ բանը շատ անհանգստեցնում է ինձ . արդեօք ի՞նչ է պատահել այնտեղ . ասաց Հարէլը դիմելով որդուն , սակայն առանց երեսը դէպի նո դարձնելով :

— Այս , հայր , մի քանի ամիս ինչ ես վերադարձել եմ եւ նրանից յետոյ դեռ լուր չունենք , թէ եւ Վահրամ իշխանը խոստացաւ շուտ շուտ տեղեկութիւն տալ մեզ :

— Երեւում է որ այնակը կարեւոր բաներ են պատահել եւ Վահրամ իշխանը միջոց չունի մեզ աեղեկացնելու Բայց դու չի՞ս կարօտում Գոհարիդ , դարձաւ Հարէլը և շշտակի նայեց աւագ որդու աչքերին :

Հարպիկը ամօթիածութիւնից մինչեւ ականջները կարմրեց :

— Ա՛ . . . աեկնում եմ որ սրամիդ լարերից խօսեցի , բայց համբերութիւն ունեցիր եւ ամէն բան լաւ կերթայ :

— Շտապեկու բան չկայ . հայրիկ , գեռ կարեւոր դործեր կան :

— Ի՞նչ գործեր , զարմացած հարցրեց հայրը :

— Յոյները կրկին հանդիսաւ չեն մնում , նրանք նորերու մեր կալուածների վրայ յարձակում գործեցին :

— Ի՞նչպէս . . . յետոյ . . .

— Յետոյ . նրանք սաացան իրենց արժանի հատուցումը :

— Հը՞մ . . . ինչ Յովհաննէս թագաւորը վախճանուել է , դրանք երես են առել . պէտք է դրանց զաս տալ , ինչպէս երեւում է նախկին դասերից չեն խրառուել :

— Այս , հայրիկ , լուրերին եթէ նայինք , Յոյները մտադրում են յարձակուելու նաեւ մեր երդերի վրայ եւ ինչպէս ասում են , այդ բանին պէնում է եւ հայ իշխաններին մէկը :

— Ո՞վ :

— Թւաղաղտոյ բերդի իշխան Թորոսիկը :

— Թորոսիկը . . . եւ ի՞նչ է ուզում դա . միթէ՞ ցանկանում է որ մեր բերդերը Յոյներին տանք եւ նրանք մեզանից առնելով իրեն հրամեցնեն :

— Նա յիմարացել է . հայրիկ , եւ ուզում է Վասակներին . Մեւ բուժաներին դասակից լինել : Նրանց դափնիները Թորոսիկին հանգըստութիւն չեն տալիս :

— Իսկ նրա որդի՞ն . Ստեփանիկը . չէ՞ որ նա մեզ մօտ պատանդ է :

— Որդին հօր արիւնից չէ : Ստեփանիկը ամենահայրենասէր երիտասարդներից մէկն է եւ նա ատում է հօրը :

— Ատո՞ւմ է . . . Այդպէս էլ պէտք է . բայց հարկաւոր է զգոյշ մնալ : Ո՞վ զիտէ ինչ կարող է պատահել :

— Ես երաշխաւոր եմ Ստեփանիկի համար . հայր . նա չէ ուզում մինչեւ անդամ իւր հօր երեսը տեսնել : Նա նրան դաւաճան է անուանում :

— Լաւ : Բայց ահա ով որ մեր ամրոցն է բարձրանում :

Հրամայեց բանալ գոնիրը եւ ընդունել :

Կրկին լուսթիւն տիրեց : Հարեւի որդիներից մէկը իսկոյն հեռացաւ եւ կարճ ժամանակից յետոյ զարձաւ մի յաղթանզամ մարդու ուղեկցութեամբ : Անծանօթ մարդը զեռ հեռուից նկատելով Հարէլ իշխանին կանչեց :

Ինձ մի հարցնէք ով եմ ես . . .

— Եհնթն է . ասաց Հարէլը եւ ժպատաց :

Եսնթը մօաւեցաւ Հարէլ իշխանին . ձեռքերը կրծքին զրեց եւ խոր զլու իւ տուեց :

— Բա՛րեւ . խենթ . բարե՛ւ . հը՛ . կրկին խե՞նթ ես թէ խելօքացիլ ես :

— Տեղ կայ խե՞նթ . տեղ կայ խելօք . իսկ տեղ կայ ոչ խելօք եւ ոչ խե՞նթ . . . բայց սաւցէք Վահրամ իշխանի նամակը :

Հարէլ իշխանը կարգում էր նոսմակը եւ նրա զէմքը հետզհետէ գունատուում : Բարկութեան ալիքները անցնում էին նրա զէմքի վրայով եւ նրա աշքերը կատաղութեան շանթեր էին արձակում :

Հարպիկ իշխանը նայում էր հօր զէմքին եւ նրա սիրաը փուլ էր գալիս : Նա զգում էր . որ օտարոտի անցքեր են պատահել Հայաստանում : Արդեօք իւր Գոհարիկի հետ ոչինչ չէ՞ պատահել :

— Հարէլ իշխանը վերջացրեց կարգալը եւ զանալով որդուն ասաց :

— Հարպիկ . որդիս . զու պէտք է իսկոյն եւ եթ սլանաս Անի : Գործերը խիստ ծանրանում են . Յոյները ուզում են Հայաստանի ակրը դառնալ . իսկ Վեստ Արդիս իշխանը . Հայոց թագաւորութեան խնա-

մակալը գաղտնի օգնում է նրանց . յուսալով որ նրանք Հայաստանի թագը կը դնեն նրա գլխին : Բայց վա՛յ է դաւաճաններին . . .

— Իսկ դո՛ւ , Դաւիթ , դարձաւ Հարէլը միւս որդուն , ամրացրու մեր բերդերը եւ գնդերչ պատրաստ պահիր հարկաւոր դէսքում օգնութեան գնալու Վահրամ իշխանին : Հայաստանի սիրտն Անին է , եթէ Անին խլուի մեղանից , ամէն ինչ կը վերջանայ : Սիրտը դադարելուց յետոյ մարդու չի կարող գոյութիւն ունենալ : Լաւ տեղից են բռնել անպիտան Թոյները :

Հարէլ իշխանը վեր կացաւ եւ զտոնալով խենդին ասաց .

— Լաւ լուրեր չես բերիլ , խենթ , հետեւիք ինձ , պէտք է այդ մասին մանրամատն խօսել :

Նրանք հեռացան աշաւարակից , իսկ փոքր ժամանակից յետոյ երկու ձիւաւոր գուրս գալով Արդնոյ ամրոցից , ձիերի գլուխները դարձրին դէպի Անոյ ճանապարհը եւ սլացան առաջ :

Զիւաւորներից մէկը Հարսիկ իշխանն էր , իսկ միւսը Ստեփանիկը դաւաճան Թորոսիկ իշխանի որդին . . .

### ԺԲ.

#### Դաւաճանանը հրնաւում է

Վեստ Սարգիս իշխանը մտագրազ իւր սենեակում էր նստած : Նա թիկն էր տուել թանկագին օինոցին եւ աշքերը մի կէտին յառելով՝ մտածում էր : Մանր էր դաւաճանի դրութիւնը . . . Նրա սեւ սրտի մէջ խիղճը երբեմն երբեմն թոյլ կերպիւ շանթում էր , բայց անհետք , առանց նշան թողնելու — կորչում , չքանում : Նրա հոգու մէջ բոյն էր դրել սեւ փառամոլութիւնը , որը խեղտում , ոչնչացնում էր ամէն մի լաւ զգացմունքի նշան : Բայց դաւաճանի սիրտն էլ մարդու սիրտ է , այնաեղ էլ դոյութիւն ունին արտասուքն ու ուրախութիւնը , իմիզն եւ անխրդութիւնը : Նա էլ երբեմն լալիս է , երբ տեսնում է անմեղ զոհի տանջանքն ու չարչարանքը եւ նրա հետ առանջում եւ ուրախանում : Վիշտը նրա սիրտն էլ է կրծում եւ դասն մտածութիւնները նրա արիւնն էլ սարցնում երակների մէջ . . .

Վեստ Սարգիսը այդ իսկ բռպէին իւր անելիքի , իւր դերի մասին էր մտածում : Նրա դլիմի մէջ մաքերը այդ իսկ բռպէին ահարկու կախ էին մզում . իսկ իւր կամքը ծփում էր այդ մաքերի մէջ : Նա զեռ չարագործութեան առաջին աստիճանների վրայ էր կանգնած : Նա զեռ մի քայլ էր արել , մի փոքրիկ քայլ գէպի գաւաճանութիւնը , գէպի վատութիւնը , եւ այդ տեղ նա կանգ առնելով տեսնում էր երկու ճանապարհն էլ : Նա զգում էր , որ այդ կանգնած տեղից գեռ հնարաւորու-

թիւն կայ եւս դանալու . զես կարելի է , միւս ճանապարհով զնալ , այն ինչ եթէ մի քայլ էլ զնէր , այն ժամանակ ուշ կը լինէր : Նրա աչքերի առաջ պարզ կերպիւ պատկերանում էր երկու ճանապարհն էլ . նա ահսնում էր որ մի ճանապարհը տանում էր դէպի համեստ բայց պատռւուր կեանքը : այն ինչ միւս ճանապարհը դէպի փոսքը , թագաւորական գահը : Բայց . . . բայց առաջին ճանապարհի վրայ փռուած էին երիներանդ ծագիկներ . իսկ երկրորդ ճանապարհի վրայ գիտակների կոյտեր : որոնց վրայ կոխկոստելով նա պիտի հասնէր այն գահին , որը փայլում էր հեռւուում . . . Ո՞րն է լու : Գնալ դէպի ծաղկազարդ ճանապարհը եւ ճանագիտաւով վերջ դնել իւր մարմնաւոր կեանքին թէ կոխկոստել արիւնաթաթաւ գիտակները : լսել վիրաւորների զառն . ազեկտուր հառաջանքները եւ արիւնուա գահերով բազմել փայլուն գահի վրայ . . . Ահա թէ ինչը առնջում էր այդ բուրէին Վեստ Սարգսին եւ շփոթում նրա սիրան ու հոգին . . .

Եւ երկար ժամանակ բուռն կերպով ընդհարուում էին այդ մաքերը այնպէս , ինչպէս ովկիսանի ահեղ ալիքները ծփում են , դիուչում իրար , ոչնչանում եւ կրկին ժանա օձի նման զլու խները վեր բարձրացնում . . .

— Ո՞չ : Մի քայլ առաջ եմ զնացել եւ էլ եա զառնալ անհնարին է : Յիմարութիւն կը լինի իմ կոզմից եա զառնալ : Հայաստանի գահը ի՞նձ պիտի պատկանի կամ ոչ ոքի : Ես դիտակներից պիտի ինձ համար պատուանդան չինեմ եւ հասնիմ այդ զահին : Եւ իմ անյողպողդ կամքը չի ընկնուի երբէք , եթէ տեսնեմ . որ ամրողջ Հայաստանը մօխրի եւ աւերակների կոյա է զարձել : Վեստ Սարգիսը չի թոյլ ասայ , որ խելացնոր պատանին ժառանգի զահը իսկ ինքը նրան ստորադրեալ . . . Ես պիտի զնամ առաջ , պիտի հասնիմ նոյտակներիս դանդաղ . բայց հաստատոն քայլերով : Արտաքուստ դահին պաշտպան իսկ ներքուստ զահը ժառանգող : Ահա իմ ծրագիրը , ահա իմ նպատակը : Եւ վա՛յ նրանց , ովքը իմ ճանապարհի վրայ կը լունդնին : Երանց փրկութիւն չկայ : Ծուռով կանյայտանայ իմ ճանապարհից Գագիկը եւ Վահրամը եւ այն ժամանակ , երբ էր հասնիմ ցանկացած նպատակիս . վա՛յ այն իշխաններին : որոնք պաշտպանում էին վահրամին եւ Գագիկին :

Վեստ Սարգիսը վեր կացաւ եւ սկսեց շրջել սենեկում . այդ ժամանակ սենեկի զրան վարագոյրը եա քաշուեցաւ եւ մի զլուխ երեւաց : որը հետաքրքրաւթեամբ Վեստ Սարգսին էր նայում . սակայն Վեստ Սարգիսը իւր մարերի հետ ընկած չէր նկատում նրան :

— Իշխան , առաց այդ մարդը եւ ներս մատւ սենեկի :

Վեստ Սարգիսը կանդ տուաւ եւ նայեց այդ մարդուն : Մի բոլէում նրա կնճիռները բարձրացնայ եւ նա իրան հանդիսաւ զէմք տուեց :

— Եղա , բարի ես եկել : նստիր ահսնենք ինչ նոր լուր ես բերել :

Լրակուը եւ իշխանը նստեցան :

— Վահրամ իշխանը մեծ պատրաստութեան մէջ է. Տէր, նա կարծես հոտ է քաշել, որ դու ձգտում ես գահը ժառանգել :

— Ի՞նչպէս :

— Վահրամ իշխանը մի քանի իշխանների եւ Պետրոս կաթուղիկոսի հետ խորհրդակցելով ուղում են Դագիկին Անի բերել եւ թագաւոր օծել :

— Այդ անմիտ տղայիքն . . .

— Նրանք այդ անում են, որ գահը թափուր չհամարուի եւ «Հ Աք չունենայ այդ գահի վրայ» :

— Իսկ ո՞ւր է այժմ Գագիկը :

— Յայտնի չէ : Մեր սպանութեան փորձը չյաջողելով նրան ա. Անապատի վանքից հեռացրել են, բայց թէ ո՞ւր — յայտնի չէ : Նրանք այժմ խիստ զգոյշ են եւ ամէն միջոց ձեռք են առել գաղտնի պահելու Գագիկ Բագրատունու տեղը :

— Հըմ . . . Այդ երեխային թագաւոր են ուղում օծե՛լ . . . բայց Վահրամը այդ չի կարող անել : Ես կը խանգարեմ նրան, մինչեւ յունական զօրքերը վրայ կը հասնեն : Զէ՞ որ Վահրամը անպատճեց Յունաց պատգամաւորին Միթէ՞ կայսրը հանգիստ կը թողնի Անին եւ չի պատժի Վահրամին :

— Այս, իշխան, եթէ Յունաց զօրքերը շուտ հասնին, Վահրամը իւր նպատակին չի հասնի : Նա ինչպէս գահի պաշտպան նախ պիտի Յոյների հետ կուի մդի, նրանց հեռացնի, ապա թէ մասձի Գագիկին թագաւոր օծել :

— Բայց ո՞վքեր են Վահրամին համոմիտաներ :

— Շատ իշխաններ, որոց թիւը մօտ երեսունի է հասնում :

— Հա՛, հասկանում եմ, բոլորն էլ իւր ազգականներն են :

— Զէ՛, իշխան, կան եւ ոչ ազգականներ, մինչեւ անզամ հեռու Տօրոս լեռներից էլ համամիտաներ կան Վահրամին :

— Ո՞վքեր :

— Պազին գաւառի իշխանը՝ Հարեւը իւր որդուց հետ :

— Այդ աւաղակնե՞րը :

— Այս, որո՞նք պատրաստ են իրենց կեանքը դնելու գահը պաշտպանելու համար :

— Լաւ, գրանց դատասաւանը Յոյներին կը տամ : Նրանք զիտեն թէ ինչպէս պէտք է պամանել աւաղակներին եւ չուտով նրանց ամրոցները մոխրի կոյտեր կը դասնան :

— Այդուս էլ պէտք է, մենք մեր ձեռքով ոչինչ չոփիաի անենք բայց միեւնոյն ժամանակ զգոյշ լինենք, որ չիմանան թէ քո մատը խառն է : Վահրամ իշխանը շրջադատել է իրեն լրականներով :

— Ովքե՞ր են այդ լրականները, արհա բարելով հարցրեց Վեստ գիւր :

— Ծատերը : Մինչեւ անդամ օրիորդներ . . .

— Ի՞նչ օրիորդներ :

— Դուք յիշո՞ւմ ես , իշխան , երբ մենք ձիւրով գնում էինք Գառզիկին միւս աշխարհ ուղարկելու եւ ճանապարհին . Անիի զաներից մի փոքր հեռու մենք կանգ առանք դարբնոցի առաջ : Եթշո՞ւմ ես նոյնպէս , որ երբ քո ձին պայտեց ծերունի գարբինը քեզանից փող չէր ուզում վերցնել եւ բացի դրանից մի քանի քայլ չարած քո ձիու պայտը վայր ընկաւ : Ահա այդ խուղը խելապէս մի լրախարան է , որը հսկում է թէ ո՞վ գնում գալիս Անի՝ եւ իսկոյն տեղեկացնում են Վահրամ իշխանին , Այդ ծերունի գարբինը մի աղջիկ ունի . որ գաղանի յարաբերութեան մէջ է Վահրամի զստեր Գոհարիկի հետ :

— Հասո՞ւն աղջիկ է :

— Հասուն եւ սիրուն :

— Հը՞մ , զա պէտք կը զայ յոյն իշխանին նու իրելու : Պէտք է կրակ տալ զրա խուղը եւ օրիորդին մեր բանտերից մէկը փոխագրել մինչեւ որ կերեւան Յունաց բանակները եւ յոյն իշխանները :

— Բայց պէտք է շտապել , տէ՞ր :

— Այս' , պէտք է շտապել եւ այդ գործը դու պիտի կատարես : Վերցրու հինգ ձիւաւոր եւ զգոյշ մասեցիք խուղին . նախ օրիորդին կապեցէք եւ ապա կրակ տուէք խուղը :

— Իսկ հօ՞րը :

— Հօրը գանակի մի հարուածով սատակեցրէք : Թող նա խմանայ , որ Վահրամը այնքան անգօր է , որ իրեն չի կարողանում օդնել :

Եղօն վեր կացաւ :

— Բայց , եղօ , զգոյշ կացիր , գործը շինելու տեղ չքանդես : Գառզիկին չկարողացար սպանել , գոնէ տեղը իմացիր : Դե՛հ , գնա , յոյս ունիմ որ առանց աղմուկի շուտով օրիորդին մեր ներքին նկուղներից մէկում կը տեղափոխես :

— Վստան եղիր , Տէր , ասաց Եղօն եւ շուտով անյայտացաւ այնպէս ինչպէս յայտնուել էր :

ԺԳ.

### Յափշտակութիւն

Անիի եւ նրա շրջակայքի վրայ խորին խաւար էր տիրում :

Ամեն տեղ հանգցրած էին ճրագները , ամեն տեղ գադարած էր շարժողութիւնը , Քաղցր նիրհը պատել էր ամենքին եւ նրանց տարել երազական այն աշխարհը , ուր տիրապետում են եւ սարսափներ , եւ անուշ երջանկութիւն . . . Քնած չէր միայն Լուսիկը , որ ճրագի աղօտ լուս

սաւորութեան տակ նստած, ձեռքը դրել էր ծնօտին եւ իւր սեւ սեւ մնձ աչքերով նայում էր դուրս, գէպի խորին խաւարը ուր տիրում էր խորին խաղաղութիւն . . . Բայց խաղաղ չէր նրա սիրաը, նրա հոգին: Մատաղ սիրաը կարծես մօտալուա փոթորիկներ էր գուշակում եւ խոռվում նրա հոգին: Նրա հայրը՝ դարբին Գեւոնցը վաղուց քնած էր, այն ինչ ինքը քնել չէր կարողանում: Երազի նման նրա աչքի առաջ անցնում էին իւր մանկական կեանքի ուրախ պատկերները, երբ նա անհոգ թըռչնիկի նման վազվում էր կանաչապատ գաշտերով եւ ձորերով եւ դաշտերում ծաղիկներից փնջեր կազմելով մալիս էր մօրը եւ կամ պակներով զարգարում իրենց սիրելի կովի գլուխը . . . Անցան այդ օրերը, երջանիկ օրերը, երազի նման չքացան նրանք եւ ինքը հասունանալով ճաշակեց կեանքի համը: Ա՞խ, այդ համը շատ գառն եւ վշալից է, խոր կակիծներ են պատճառում մասուադ կեանքին եւ ընկդմում իրեն մըսածմունքի ծովը . . . բայց ինչո՞ւ, թ՞նչ պատճառաւ, երբ նա փոքր էր չգիտէր վշտանալ, ցաւել ու արամել . . . Մի՞թէ վարդը բացւում է միայն արամելու եւ ցաւելու, մի՞թէ կուսական սիրաը հասունանալով միայն պիտի արամի եւ ցաւի եւ խորին վիշտը կեղեքի նրա հոգին . . .

— Ո՞հ, ինչո՞ւ ես քնել չեմ կարողանում, ուզում եմ քնել բայց քոնը փախչում է աչքերից: ուզում եմ մոռանալ աշխարհը, ե՛ւ վիշտ, ե՛ւ տրամութիւն, սակայն զրանք նոր ոյժով կեղեքում են հոգիս եւ վրդովում սիրտ ու ասում էր Լուսիկը եւ նրա սիրուն աչքերից հեղում էին արտասուքի ասատ կաթիկներ:

Լուսիկը լալիս էր, ո՞վ գիտէ ինչո՞ւ: իւր գիտ Սաւորանիկին էր կարօսել թէ մօրն էր յիշում — յայանի չէր, միայն այս պիչեր խիստ արտում, խիստ յուզուած էր երեւում, զգում էր, որ իւր սրտիկը այս պիչեր խիստ արագ էր բարախում:

— Ո՞հ, Սասուած իմ, ինչ պիտի պատահի ինձ հետ, ասաց ինքն իրեն Լուսիկը եւ բռնեց իւր սիրաը, կարծես նա փախչելիս լինէր իւր նեղ կապանքներից:

Անգիտակցարար նա իւր ուշադրութիւնը մի կէտի վրայ դարձրեց եւ սարսուցաւ: Կարծես նրա սիրաը կանգ առաւ:

Նա իւրեանց խուզից մի քանի քայլ հեռու ստուերներ նկատեց, որոնք լուս խորհրդակցում էին իւրաք հետ: Եւ Լուսիկը պարզ լսեց թէ ինչպէս նրանցից մէկը ասում էր միւսին:

— Զգոյշ կացէք, օրիորդին վնաս չհասցնէք, նա պէտք է ողջ հասնի մեր իշխանին:

Լուսիկը տեղն ու աեղը մնաց սասած: Մի վայրկեան երկիւղը պաշարեց նրան եւ քիչ մնաց խելքը կորցնէր: ապա նա մի սոտիւն գործեց դէպի հօր անկողինը եւ հրելով նրան կանչեց:

— Հայրիկ, հայրիկ, վեր կաց, վասանդը մօտ է մեզ . . .

Քնաթաթախ վեր թուաւ դարբին Դեւոնդը ևւ գեռ շփոթուած կանգնած էր սենեկի մէջ , երբ զուսը ահապին ճարճատիւնով ջարդ ու փշուր եղաւ եւ մի քանի մարդ ներս մտան սենեկակ ։ Ճրագը հանգաւ եւ մթութեան մէջ սկսուեց կոփի .

Բայց անզէն քնաթաթախ դարբինը ոչնչով չկարողացաւ գիմաղրել չորս թէ հինգ մարդու . որոնք սրի մի քանի հարուածներ տալով վայր դլորիցին նրան : Դարբինը ընկաւ արեան մէջ շաղախուելով եւ սկսեց փորսով տալով անգիտականցար դուրս սողալ , այն ինչ աւազակները յարձակուել էին Լուսիկի վրայ եւ ուզում էին կապկապել նրան , որ բոլոր ուժով գեռ կուռմ էր աւազակների հետ : Նա կծում էր ատամներով , չանկոտում նրանց երեսները եւ աքացի աւալիս : Բայց ոյժը իրանն արաւ Զարագործները Լուսիկի բերանը թաշկինակ դրին որ ձայն չնանի , ապա պինգ պարաններով կապկապելով նրա ձեռքն ու ուաքը դուրս տարան սենեկից :

Լուսիկը արդէն ուշաթափուել էր : Նրա վերջին խօսքը Ստեփանիկի անունն էր , որ ակամայից դուրս դուաւ նրա սրտի խոռոչներից իսկ թէ այնուհետեւ ինչ պատահնեց — ոչինչ չիմացաւ : Նա չտեսաւ մինչեւ անգամ թէ ինչպէս չարագործները իրեն խրճից հեռացնելով , դրին կանաչ խոտի վրայ . իսկ մի քանիսը ետ դառնալով կրակի տուին իւր տունն ու օջախը , ուր անցըրել էր իւր մանկութեան քաղցր օրերը : Ապա , երբ բոլորակ գաշտի վրայ իրենց տունը կրակէ փունջ կազմելով լուսաւորեց շրջակայքը , այդ ժամանակ միայն Լուսիկին դրին ձիռւ վրայ եւ ուր որ շտապով հեռացան :

Իսկ երբ բացեց իւր աչքերը , նա տեսաւ , որ ինքը մի կամարակապ ունեակներից մէկումն է գանւում , ուր չէին թափանցում մինչեւ անգամ արեւի ճառագայթները :

### ԺԴ.

#### Յունաց բանակում

Եւ յանկարծ Հայաստանի արեւմտեան կողմից երեւացին յունական լէպէոնները եւ ճանապարհին պատահած գիւղերն ու չէնքերը սկսեցին մոխրի եւ աւերակների կոյաներ դարձնել . . . .

Անի քաղաքը ցնցուեց : Նա զգում էր որ այդ լէպէոնները գէպի ինքն է գալիս , որ մի հարուածով ջնջի . ոչնչացնի երկրի երեսից շէն Անին եւ այգպիսով պատժի այն յանդուցն Հայերին . որոնք համարձակւում են մեծագօր կայսեր գեսպանին անողատութեամբ յետ դարձնելու , եւ դուռզ Յոյները անողորմաբար կոտրում էին Հայերին , ոչնչացնում

պատահող շէնն ու գիւղը եւ յառաջանում դէպի Հայաստանի սիրաը , դէպի գոսող Անին , որը արհամարհում էր դոցա :

Յոյները վստահ էին իրենց յաղթութեան վրայ , վստահ էին , որովհետեւ նրանք գիտէին , որ Հայաստանը տէր չունի , որ նա գլուխ չունի , որի թեւերի տակ ժողովուելով կարողանային դիմադրիլ նրանց Ո՞վ կը յանդգնէր իրենց առաջ գուրս գալ քանի որ զահը թափուր էր , իսկ տէրութեան խնամակալը՝ Վեստ Սարգիսը իրենց ձեռքին կոյր գործիք :

Եւ զաւաճանը երբ լսեց Յունաց լէգէոնների դէպի Հայաստանի սահմանները մուտ գործելը , նրա սիրաը թունդ առաւ եւ փառասիրութեան կրակը բորբոքուեցաւ նրա հոգու մէջ : Նա զգում էր , որ իւր իղձերը կատարում են , որ իւր ծրագիրները հետզհետէ իրականանում են եւ մօտ է այն ժամը , երբ արքայական թագը կը զնի իւր գլխին եւ կը բազմի Բագրատունեաց գոհի վրայ :

Այն ժամանակ վա՛յ իւր հակառակորդներին . . .

Եւ Վեստ Սարգիսը անեցինների աչքին թող փշելով , յայտնեց նրանց թէ զնում է Անիից իւր կալուածքները եւ իր անտեղեակ Յոյների Հայաստան մանելուն , հեծաւ իւր նժոյգը եւ սլացաւ Անիից դուրս :

Եւ երբ զուրս թռաւ Անիի զոններից , նրա գէմրի գծագրութիւնը փոխուեցաւ , ուրախութեան եւ յնծութեան ալիքներ անցան նրա երեսի վրայ եւ նա ուժգին մտրակելով իւր ձիուն , երեսը չուռ տռուց դէպի Հայաստանի արեւմաեան սահմանները , ուր արդէն ծխում էին հայ գիւղերը եւ սլացաւ առաջ :

Նրա ոտքերի տակ կարծես հոզ չլինէր , կարծես օդի մէջ լինէր նա սլանալիս եւ նրա սիրուց ճաքում էր անհամբերութիւնից վաղօրօք հասնելու Յունաց բանակը :

Թոռ' ր , իմ ծի , իմ անուշիկ նժոյգ , այժմ զու ինձ Անիից գուրս ես բերում որսէւս մի սոսկ իշխան , իսկ չուառով ներս կը բերեմ իրեւ թագաւոր , իրեւ միահեծան աէր բովանդակ Հայաստանի , ասում էր Վեստ Սարգիսը եւ աւելի շատապեցնում ձիուն :

Անցան մի քանի օրեր : Ճերեկը գիշեր էր դառնում , իսկ դիշերը ցերեկ , սակայն Վեստ Սարգսի համար հանգստութիւն չկար : Նա զես սլանում էր առաջ երբ մի երեկոյ , հեռու հորիզոնից վրայ կրակէ բոցեր նկատեց , որոնք երբեմն բոցավավում էին իսկ երբեմն հանգչում :

Վեստ Սարգսի դէմքին պատեց անիմանալի մասնութիւն եւ նա քաշեց ծիու սանձը , առանց աչքը հեռացնելու այդ բոցերից : Նա կարծես զգաց , որ այդ բոցերի մէջ կատարում են մարդկային բարբարութիւններից ամնասոսկալի պատկերներ , նա կարծես իմաշաւ , որ այնտեղ այրուում են հայկական գիւղեր , ուր կրակին մասնուելով Հայոց կովերն ու ոչխարները , անդն ու անգաստանը , անխնայ կոտորւս մ են իւր իսկ հայրենակիցներն ու ազգականները . . .

Վեստ Սարգիսը տիրեց : Նրա որակի մէջ անցաւ մի տեսակ անբաշատրելի յոյզ . որը առժամանակ յեղաշրջեց նրա մաքերը , նրա հոգու բոլոր տրամադրութիւնները :

— Այդ ի՞նչ կրակներ են , դարձաւ նա իրենից միշտ անբաժան նշային , որը նոյնպէս հետաքրքրութեամբ նայում էր կրակներին :

— Տէ՛ր , այնաեղ Յունաց բանակն է աեղաւորուած ուր մենք շտապում ենք : պատասխանեց Եղօն ուղիղ պատասխանից չեղուելով :

Դիստ Ասրգիսը աւելի մոռյլուեց : Նա ուզում էր լսել , որ այդ կրակները ուրիշ բան են գուշակում եւ ոչ թէ հրդեհ , աւելածութիւն : այն ինչ Եղօն ացգ մասին ոչինչ չառաց , թէնու գիտէր նրանց նշանակութիւնը : Մի՞թէ Եղօն էլ սարսափում է իրեն նման այդ բոցերի վրայ նայելիս . մասմեց Վեստ Սարգիսը եւ կրկին դիմեց նրան :

— Եղօ՛ , ևս քեզ հարցնո՞մ եմ այդ ի՞նչ կրակներ են , որ լուսաւորում են իսաւար շրջակայքը :

— Յունաց բանակի խարոյկներն են , տէր . որի վրայ նրանք աաքացինում են իրենց սառւած մարմինները . պատասխանեց Եղօն մի տեսակ գարնուրելի դիմական մաղիտ արձակելով :

Վեստ Սարգիսը նայեց նրան եւ սարսուց : Իւր զինակցի դէմքը գարհուրելի էր :

Նրանք լուս կրկին առաջ անցան : Բոցերը հետզհետէ պարզուում էին եւ նրանց մէջ նկատում շարժողութիւններ :

— Իշխան'ն . մի փոքր էլ որ առաջ գնանք , կերեւայ Յունաց բար նակը : Չե՞ս ահանում , ահա բլրի սառորովին արդէն երեսում են Յունաց ատզաւարները , ասաց Եղօն եւ մատով ցոյց տուեց մօտակայ բլրի սառրուսը :

Վեստ Սարգիսը ոչինչ չպատասխանեց եւ նրանք կրկին առաջ եխն զնում . երբ իրենց հենց ոտքերի տակ ստուերների նման բաններ նկատեցին . որոնք ճանապարհից աջ ու ձախ չեղուելով շտապով թագնուում էին թիւների ու մայրանների մէջ :

Նրանցից մի քանիսը մինչեւ անգամ խելագարների նման առաջ վազելով , չնկատեցին ձիաւորներին եւ ուղղակի ձիւրի ոտքերի տակ ընկնելով , կանդնեցին Վեստ Սարգսի ձիուն :

— Ո՞վ ևս դու , կանչեց իշխանը իւր ձիու ռտքերի տակ թաւալուով հառաջող կնոջը , որը ամուր գրկել էր իւր ծծի երեխային : Յունահատուած կինը երբ նկատեց իշխանական զգեսաը եւ լսեց հայ լեզուն , ուրախութիւնից փաթաթուեց ձիու ոտքերին եւ հառաջելով կանչեց :

— Տէ՛ր , ազատեցէք մեզ . խղճացէ՛ք , մեզ կոսորում են . . .

— Ո՞վ է կոսորում , հարցրեց խեղառուած ձայնով Վեստ Սարգիս :

— Յոյները , տէր , նրանք կրակ տաւին մեր գիւղը եւ անխնայ կոտորում են մեզ :

— Իշխանութեանք զրանց և մենք շատենք առաջ. չե՞ս ականաւմ, ահա մի խումբ Յունաց զօրքերից գէպի մեզ են գալիս, ասաց Եղօն եւ ցոյց տուեց իրենց մօտեցող զինուորների փոքրիկ խմբին :

Վեստ Սարգիսը ցնցուեց. նա թափ տուեց ձիու. սանձը եւ իւր ձիու ոտքերի տակ կոյսկուաելով հառաջող կնոջը, սլացաւ առաջ : Նա լսեց թէ ինչպէս կինը սուր, սիրա կարատող ձայնով ծղրաց ու մորմոքուող ձայնով կանչեց :

— Անիծեալ լինիս, գու սպանեցիր իմ ծծկեր մանկանը . . .

« Անիծեալ լինիս » ւ մրմռում էր ինքն իրեն Վեստ Սարգիսը եւ սլանում առաջ, մինչդեռ այդ խօսքերը անջնջնելի կերպով դրոշմռում էր նրա հոգու մէջ :

Վեստ Սարգիսը եւ Եղօն մի փոքր էլ առաջ դնացին, երբ Յունաց զինեալ խումբը կանգնեցրեց նրանց :

— Ո՞վ էք գուք եւ ո՞ւր էք գնում, հարցրեց խմբապետը սուրը մերկացնելով եւ կտրելով իշխանի առաջը :

— Զէնցդ ցած դիր, մենք թշնամիներ չենք, այլ բարեկամներ, ասաց խրոխա ձայնով Վեստ Սարգիսը եւ արիւնը բորբոքուեց նրա երակներում : Նա զգում էր . որ բաղաը իւր հետ հանաքներ էր ահում եւ հասարակ զինուորն անգամ իւր դէմ զէնք բարձրացնում :

— Ուրեմն ձեզ կը դանենք մեր բանակը եւ այնուհեաեւ ինքը հրամանատարը գիտէ թէ ինչպէս կը վարուի ձեզ հետ, պատասխանից խըմբապետը :

— Ո՞րտեղ է ձեր հրամանատարի վրանը, ցոյց տու էք ինձ ասաց իշխանը :

— Այս բոպէխս մենք ձեզ կը տանենք, ասաց խմբապետը եւ իւր խմբով շրջապատելով իշխանին եւ իւր զինակցին որպէս գերի, մտան Յունաց բանակը :

Վեստ Սարգիսը երբ աջ ու ձախնայեց, ակսաւ, որ ամբողջ Յունաց բանակը խինդ ուրախութեան մէջ էր : Յունաց բանակում սկսուել էր կերուխումը հայ շինականների արիւն քրտնքի աւարով . . .

(Տարումակելի)

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶՅԵԱՆԸ